

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՎԵՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՖՈՐՈՒՄԻ

08 նոյեմբերի 2018թ.

ք.Երևան

Օրակարգ՝

1. Բացման խոսք – **Արմեն Ղազարյան, ՀՀ ՏԿՁՆ միգրացիոն ծառայության պետ**
2. Վերաինտեգրման աջակցությունը Հայաստանում. բացերը և զարգացման հեռանկարները (զեկույցի ներկայացում և քննարկում)- **Ալինա Պողոսյան, փորձագետ**
3. «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի գործունեության և «Միգրացիա և զարգացում» ծրագրի ներկայացում- **Լուսինե Ստեփանյան, «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի «Միգրացիա և ինտեգրում» ռազմավարական ուղղության ղեկավար**
4. Ռեադմիսիոն հայցերի վիճակագրության ներկայացում- **Հայկանուշ Չոբանյան, ՀՀ ՏԿՁՆ միգրացիոն ծառայության արտաքին կապերի բաժնի պետ**
5. Այլ հարցեր

2018թ. նոյեմբերի 8-ին կայացավ Վերադարձի և վերաինտեգրման եվրոպական ցանցի (ERRIN)՝ Հայաստանի ծրագրի բացման արարողությունը, որին հաջորդեց Հայաստան վերադարձողների վերաինտեգրման հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների ֆորումի (այսուհետ՝ ֆորում) երրորդ հանդիպումը:

Ֆորումի հանդիպմանը, բացի անդամ կազմակերպություններից, մասնակցում էին նաև ՀՀ կառավարության, ՀՀ-ում դիվանագիտական ներկայացուցչությունների, ինչպես նաև տեղական, միջազգային և հասարակական կազմակերպությունների շուրջ հինգ տասնյակ ներկայացուցիչներ:

Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի (ՄՔՄՄԿ/ICMPD) հայաստանյան գրասենյակի և ERRIN Հայաստան ծրագրի ղեկավար Կարել Հոֆստրան, խոսելով վերաինտեգրման նոր ծրագրի մասին, նշեց, որ երկու տարվա ընթացքում վերաինտեգրման աջակցություն կցուցաբերվի Հայաստան վերադարձող մոտ 400 միգրանտների, սակայն ծրագիրն այնքան ճկուն է, որ հնարավոր է մեծացնել թե՛ շահառուների և թե՛ հատկացվող գումարի քանակը: Առաջնահերթությունը տրվելու է սկսնակ բիզնեսներին, ինչպես նաև առավել խոցելի

միգրանտներին, որոնք ունեն բժշկական օգնության կարիք և կացարանի խնդիր: Վերադարձողներին հատկացվելու են նաև ծրագրային աջակցության այլ տեսակներ:

Փորձագետ Ալինա Պողոսյանը ներկայացրեց Հայաստանում ցուցաբերվող վերաինտեգրման աջակցության բացերի և զարգացման հեռանկարների վերաբերյալ հետազոտությունը: ՀՀ վերադարձի հոսքերի և վերադարձողների խնդիրների վերաբերյալ հետազոտության իրականացումը նախատեսված է ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած «ՀՀ միգրացիայի քաղաքականության 2017-2021 թվականների ռազմավարության արդյունավետ իրականացումն ապահովող միջոցառումների ծրագրի» 3.1.գ.1 կետով:

Անդրադառնալով վերադարձողներին ցուցաբերվող վերաինտեգրման աջակցությանը, փորձագետն ընդգծեց, որ վերադարձողներին պետք է դասակարգել խմբերի՝ ըստ իրենց կարիքների, բացահայտել դրանք և համադրել վերաինտեգրման աջակցության ծառայություններին: Նա նաև կարևորեց ոլորտում հայաստանյան օրակարգի ներմուծման անհրաժեշտությունը:

Զեկույցի ներկայացումից հետո ֆորումի հանդիպմանը ներկա մասնակիցների միջև ծավալվեցին ակտիվ քննարկումներ, զեկույցի շուրջ հնչեցին որոշակի դիտարկումներ և առաջարկներ: Մասնավորապես, ժողովրդագիր Ռուբեն Եգանյանն առաջարկեց նախքան վերադարձողներին որոշակի խմբերի բաժանելը, հստակեցնել, թե ովքեր են համարվում ՀՀ վերադարձող անձիք, նաև ստեղծել վերադարձած միգրանտների հաշվառման համակարգ: Քննարկվեցին նաև վերաինտեգրման աջակցության համար պետական ֆինանսավորման ներգրավման, ինչպես նաև Հայաստան վերադարձողների վերաինտեգրման աջակցության հիմնադրամի ստեղծման հարցերը:

Այնուհետև, «Հայկական Կարիտաս» բարեսիրական ՀԿ-ի «Միգրացիա և ինտեգրում» ռազմավարական ուղղության ղեկավար Լուսինե Ստեփանյանը ներկայացրեց իրենց կազմակերպության կողմից իրականացվող «Միգրացիա և զարգացում» ծրագիրը, ինչպես նաև ծրագրի վիճակագրությունը վերադարձողների մասին՝ նշելով, որ վերադարձող միգրանտները հիմնականում Գերմանիայից, Ավստրիայից, Նիդերլանդներից և Բելգիայից են: Ծրագրի շրջանակներում վերաինտեգրման աջակցություն տրամադրվում է ԵՄ երկրներից, նաև Լիխտենշտեյնից, Շվեյցարիայից և Նորվեգիայից կամավոր և հարկադիր կերպով վերադարձող ՀՀ քաղաքացիներին:

ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն ծառայության արտաքին կապերի բաժնի պետ Հայկանուշ Չոբանյանը ներկայացրեց ռեադմիսիոն հայցերի վերաբերյալ վիճակագրությունը, նշելով, որ Ծառայությունն ընթացիկ տարվա նոյեմբեր ամսվա դրությամբ ԵՄ 10 երկրներից ստացել է 888 ռեադմիսիոն հայց՝ 1768 անձանց մասին:

Հ.Չոբանյանը նկատեց, որ 2014թ.-ից ի վեր, երբ ուժի մեջ է մտել ՀՀ-ԵՄ ռեադմիսիոն (առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման) համաձայնագիրը, տարեցուտարի մեծանում է ԵՄ երկրներից ստացվող ռեադմիսիոն հայցերի թիվը, և այդ առումով Գերմանիան հանդիսանում է առաջատար երկիրը: Մեծացել է նաև ռեադմիսիոն հայցեր ուղարկող երկրների թիվը, այսպես, եթե 2014թ-ին հայցեր ստացվում էին ընդամենը ԵՄ 2 երկրից, ապա 2018թ-ին՝ արդեն 10 երկրից: Բացի այդ, պատասխանների մոտ 80 % պարագայում ՀՀ քաղաքացիությունը հաստատվում է, իսկ ռեադմիսիոն հայցերը պատասխանվում են համաձայնագրով սահմանված համապատասխան ժամկետներում:

Հ.Չոբանյանը նաև տեղեկացրեց, որ մոտ ապագայում հնարավոր կլինի ունենալ ռեադմիսիոն հայցերի էլեկտրոնային համակարգ, որի միջոցով ռեադմիսիոն հայցի քննության ընթացքը մի քանի անգամ կրճատվելու է: Համակարգի ներդրման շնորհիվ ապահովվելու է անձի վերաբերյալ ռեադմիսիոն հայցի և դրա վերաբերյալ պատասխանի փոխանցման ավարտական գործընթացի իրականացումը էլեկտրոնային համակարգի միջոցով:

Հանդիպման ավարտին որոշվեց՝

1. Ֆորումի անդամ կազմակերպություններն իրենց կողմից իրականացվող վերաինտեգրման ծրագրերի վիճակագրությունը ներկայացնեն «Մեկ պատուհան» ծառայության վերաինտեգրման հարցերով խորհրդատուին՝ մեկ ամբողջական վիճակագրական տվյալների բազա հավաքագրելու և կազմելու նպատակով:
2. Վիճակագրական տվյալների հավաքագրման ձևաչափը մշակելու է ՄԾ-ն:
3. Նոր մեկնարկած ERRIN վերաինտեգրման ծրագրի նկարագրությունը (պրոֆայլը), հետագայում՝ նաև վերադարձողների վերաբերյալ վիճակագրությունը, նույնպես տրամադրվի «Մեկ պատուհան» ծառայությանը:
4. Անդամ կազմակերպությունները պարբերաբար ներկայացնեն իրենց ծրագրերի շրջանակներում վերադարձած միգրանտների մասին հաջողված պատմությունները:

13.11.2018